



**ԿԱՆՈՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**  
**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**  
**ՈՒՄԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ դրույթներ.**

1. Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ) Ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ԳՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների միավորում է, որի նպատակն է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:
2. Ընկերությունը գործում է ԳՊՀ Կանոնադրության, սույն կանոնադրության, գիտական խորհրդի որոշումների հիման վրա:
3. Ընկերության կանոնադրությունը և դրա փոփոխությունները հաստատվում են ԳՊՀ Գիտական խորհրդի կողմից:
4. Ընկերությունը սահմանված կարգով կարող է ունենալ գիտական հոդվածների ժողովածու, ձևաթուղթ, ինտերնետային կայք:
5. Ընկերությունն իր նպատակների իրականացման համար համագործակցում է ԳՊՀ Ուսանողական խորհրդի, հանրության հետ կապերի և լրատվության բաժնի և այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ:
6. Ընկերության անվանումն է՝ հայերեն՝ Ուսանողական գիտական ընկերություն, ռուսերեն՝ Студенческое Научное Общество, անգլերեն՝ Student Scientific Society, իսկ հապավումը հայերեն՝ ՈՒԳԸ, ռուսերեն՝ CHO, անգլերեն՝ SSS:
7. Ընկերության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1, Գավառի պետական համալսարան:

**II. ԸՆԿԵՐՈՒՅԱՆ ՆԱԿԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ.**

8. Ընկերության նպատակն է նպաստել ուսանողության ընդհանուր աշխարհայացքային և մասնագիտական զարգացմանը:
9. Ընկերության խնդիրներն են.
  - 1) գիտական և կրթական ոլորտներում ուսանողության նախաձեռնությունների սատարում և իրականացում,
  - 2) ուսանողական գիտաժողովների, սեմինարների, քննարկումների, գիտահանրամատչելի դասախոսությունների և այլ գիտական ու կրթական ուղղվածություն ունեցող միջոցառումների կազմակերպում՝ դրանցում ընդգրկելով նաև համալսարանական երիտասարդական գիտական ներուժը,
  - 3) համակողմանի աջակցության ապահովում շնորհաշատ ուսանողներին,
  - 4) գիտական խմբերում և տարբեր գիտական ծրագրերում ուսանողների ընդգրկում,
  - 5) ուսանողների գիտական աշխատանքների և այլ նյութերի հրատարակում,
  - 6) այլ գիտական կենտրոնների հետ կապերի հաստատում և տեղեկատվության փոխանակում:

### III. ԸՆԿԵՐՈՒՅՅԱՆ ԿԱՌՈՍՎԱԾՔՆԵՐ և ղեկավար մարմինները.

10. Ընկերության կառուցվածքային սկզբնական մարմինները ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերություններն են (այսուհետ՝ ֆայուլտետի ՈՒԳԸ), որոնք ձևավորվում են ամբիոնների երաշխավորությամբ ներկայացված առնվազն երեք ուսանողներից: Ֆակուլտետի ՈՒԳԸ-ն մշակում և իրականացնում է ծրագրեր, որոնք ուղղված են ԳՊՀ Ընկերության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացմանը:

11. Ֆակուլտետի ՈՒԳԸ-ի առաջադրմամբ ֆակուլտետի խորհուրդը հաստատում է ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահի և քարտուղարի թեկնածությունները, որոնք կազմակերպում են ֆակուլտետի ՈՒԳԸ-ի աշխատանքները, համակարգում են նրա աշխատանքները, ներկայացնում ֆակուլտետի ՈՒԳԸ-ն և նրա ծրագրերը ԳՊՀ Ընկերության գիտական խորհրդում:

12. Ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նիստերը հրավիրվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Նիստերը հրավիրվում են նախագահի կողմից կամ անդամների 1/3-ի պահանջով: Նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում են անդամների ավելի քան 1/2-ը, իսկ որոշումներն ընդունվում են անդամների ընդհանուր ձայների պարզ մեծամասնությամբ: Ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կարող է մշակել իր կանոնակարգը և իրականացնել սույն կանոնադրությամբ չհակասող այլ գործառնություններ:

13. Ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահը հանդիսանում է ֆակուլտետի խորհրդի անդամ, ԳՊՀ ՈՒԳԸ գիտական խորհրդի անդամ:

14. Ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կարող է կազմակերպել ուսանողական մասնագիտական ակումբներ, որոնց կազմում կարող են ընդգրկվել ֆակուլտետի այլ ուսանողները:

15. ԳՊՀ Ընկերության ղեկավար մարմինը ՌԻսանողական գիտական ընկերության խորհուրդն է, որի նիստերը գումարվում են ուսումնական կիսամյակում ոչ պակաս, քան երկու անգամ:

16. Ընկերության գիտական խորհրդի կազմի մեջ մտնում են Ընկերության նախագահը, նախագահի տեղակալը, քարտուղարը, ֆակուլտետային ՈՒԳԸ-ների նախագահները:

17. Ընկերության գիտական խորհուրդն իրականացնում է հետևյալ գործառնությունները.

- 1) քննարկում և որոշում է Ընկերության գործունեության հիմնական ուղղությունները, միջոցներ է ձեռնարկում որոշումների իրականացման համար,
- 2) առաջարկություններ է ներկայացնում Ընկերության գիտական խորհրդին, ՌԻսանողական խորհրդին, ԳՊՀ այլ կառուցվածքային ստորաբաժանումներին,
- 3) ի գիտություն է ընդունում Ընկերության նախագահի տարեկան հաշվետվությունը,
- 4) մշակում է Ընկերության հեռանկարային և ընթացիկ ծրագրերը, հաստատում և համակարգում է ֆակուլտետային ՈՒԳԸ-ների աշխատանքները և ծրագրերը,
- 5) հաստատում է իր աշխատակարգը,
- 6) ստեղծում, վերակազմավորում և լուծարում է սույն կանոնադրությամբ սահմանված՝ Ընկերության աշխատանքային մարմինները, հաստատում նրանց կազմը և աշխատակարգը, ինչպես նաև նրանց կարող է լիազորել իր իրավասությանը վերաբերվող որոշ հարցերի լուծման իրավունք,
- 7) որոշում է ընդունում շնորհել Ընկերության պատվավոր անդամի կոչում և կանոնակարգում է Ընկերության անդամությանը վերաբերվող այլ հարցեր,
- 8) վավերացնում է Ընկերության անունից կնքած պայմանագրերն ու համաձայնագրերը:

18. ԳՊՀ Ընկերության գիտական խորհրդի նիստն իրավագոր է, եթե նրան մասնակցում են անդամների ընդհանուր թվի ավելի քան կեսը: Որոշումներն ընդունվում են ընդհանուր ձայների պարզ մեծամասնությամբ: Գիտական խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել Ընկերության նախագահի, գիտական խորհրդի, անդամների մեկ երրորդի պահանջով:

19. ՌԻսանողական գիտական ընկերության նախագահն ընտրվում է Ընկերության անդամների կողմից՝ երեք տարի ժամկետով և ներկայացվում է գիտական խորհրդին:

20. Ընկերության անդամներն ընտրվում են նախագահի տեղակալին և քարտուղարին՝ նույն ժամկետով:

21. Ընկերության նախագահն ի պաշտոնե հանդիսանում է ԳՊՀ գիտական խորհրդի անդամ:

22. Ընկերության գիտական խորհրդի անդամներ են հանդիսանում ֆակուլտետային ՈՒԳԸ-ների

նախագահները:

23. Ընկերության նախագահն ի պաշտոնե ներկայացնում է Ընկերությունը, համակարգում Ընկերության գիտական խորհրդի գործունեությունը, ապահովում է Ընկերության մարմինների համագործակցությունը, տալիս է լիազորագրեր, ընկերության անունից կնքում պայմանագրեր և համաձայնագրեր:

24. Ընկերության նախագահը տարեկան հաշվետվությամբ հանդես է գալիս ԳՊՀ գիտական խորհրդում:

25. Ընկերության նախագահի տեղակալը նախագահի բացակայության դեպքում՝ ստանձնում է նրա լիազորությունները, համակարգում է քարտուղարության աշխատանքները և ՈւՖԸ գիտական խորհրդի կողմից ստեղծված մարմինների գործունեությունը, հանդես է գալիս կատարած աշխատանքների մասին հաղորդմամբ:

26. Ընկերության քարտուղարը ղեկավարում է քարտուղարության աշխատանքները:

#### **IV. Ընկերության միջոցները և դրանց օգտագործման կարգը.**

27. Ընկերության միջոցները գոյանում են ԳՊՀ բյուջեից կատարվող հատկացումներից, հովանավորների կողմից կատարվող հատկացումներից, ԳՊՀ կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

28. Ընկերությունը անվճար, սահմանված կարգի համաձայն, օգտվում է ԳՊՀ տարածքային, գույքային, տեխնիկական և այլ միջոցներից:

29. Ընկերության միջոցներն օգտագործվում են կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար:

#### **V. Ընկերության գործունեության դադարեցման կարգը.**

30. Ընկերությունն իր գործունեությունը դադարեցնում է ԳՊՀ գիտական խորհրդի որոշմամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

31. Ընկերության լուծարումից հետո նրա ամբողջ գույքը և միջոցները փոխանցվում են Գավառի պետական համալսարանին: